

## **ՀՀ ոստիկանության ծառայությունների և տարածքային մարմինների 2009 թ. օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքների մասին**

Հանրապետության ներքաղաքական կայունությունը հնարավորություն ընձեռեց ՀՀ ոստիկանությանը 2009 թ. ընթացքում լիարժեք կենտրոնանալու ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված խնդիրների իրագործման վրա, եւ պետք է արձանագրել, որ գրեթե բոլոր ուղղություններով ձեռք են բերվել շոշափելի արդյունքներ:

Բացի այդ, ուղենիշ ունենալով ՀՀ նախագահի հանձնարարականները եւ ՀՀ կառավարության գործունեության ծրագրային դրույթները, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է համակարգված աշխատանքը բնակչության վստահության բարձրացման ուղղությամբ: ՀՀ ոստիկանությունը նշված խնդրի լուծման հիմնական գրավականներից է համարում՝ հանցագործությունների եւ այլ իրավախախտումների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումներին պատշաճ արձագանքումը, քողարկված բնույթ կրող հանցագործությունների հայտնաբերումն ու բացահայտումը, պատժի անխուսափելիության հանրահայտ սկզբունքի հնարավորինս լիարժեք իրագործումը, բնակչության մոտ անձնական անվտանգության ապահովվածության զգացման ամրապնդումը, ինչպես նաեւ ոստիկանության ծառայողների առօրյա գործունեությունում օրինականության պահպանումը:

Հանցավորության դեմ պայքարի, հասարակական կարգի և հասարակական անվտանգության ապահովման ուղղությամբ ՀՀ ոստիկանության կողմից 2009 թ. ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը ստորև ներկայացվում է հենց այս տեսանկյունից:

**1. Հանցագործությունների և այլ իրավախախտումների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումներին պատշաճ արձագանքելու առումով 2009 թ. ընթացքում տարվել է ակտիվ աշխատանք հանցագործությունները հաշվառումից թաքցնելու արատավոր գործելաոճը բացառելու, ինչպես նաև քողարկված բնույթ կրող հանցագործությունների հայտնաբերման ուղղությամբ, ինչը մեծապես նպաստել է հանրապետությունում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակի կտրուկ աճին՝ 54,7%-ով կամ 5068 դեպքով (2008 թ.՝ 9271, 2009 թ.՝ 14339):**

Բացի այդ, հանցագործությունների թվաքանակի նման աննախադեպ աճը պայմանավորված է նաև տուժողի բողոքի բացակայության պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183 հոդվածով կարճված գործերի կամ մերժված նյութերի հաշվառման հանգամանքով (3129 դեպք), ինչպես նաև այն փաստով, որ 3027 հանցագործության դեպք, կատարված լինելով նախկին տարիներին, ոստիկանության ջանքերով հայտնաբերվել և հաշվառման է վերցվել հաշվետու տարվա ընթացքում (2008 թ.՝ 1505):

Որպես դրական միտում պետք է դիտել այն փաստը, որ հանցավորության կառուցվածքում 2009 թ. նվազել է առանձնապես ծանր (2008 թ.՝ 2,0%, 2009 թ.՝ 1,8%) և ծանր հանցագործությունների (2008 թ.՝ 44,0%, 2009 թ.՝ 35,9%) տեսակարար կշիռը: Մասնավորապես, նվազել է այնպիսի հիմնական հանցատեսակների թիվը, ինչպիսիք են սպանությունը (2008 թ.՝ 78, 2009 թ.՝ 68), սպանության փորձը (2008 թ.՝ 30, 2009 թ.՝ 29), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը (2008 թ.՝ 215, 2009 թ.՝ 181), ինչպես նաև բնակարանային գողությունները (2008 թ.՝ 1009, 2009 թ.՝ 988) և տրանսպորտային միջոց փախցնելը (2008 թ.՝ 66, 2009 թ.՝ 54): Միանշանակ դրական կարելի է գնահատել անչափահասների շրջանում իրականացված կանխարգելիչ աշխատանքների արդյունավետությունը. հանցագործությունների զգալի աճի պարագայում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների թիվը նույնպես

նվազել է (536-ից 532):

Հանցավորության շարժընթացում և կառուցվածքում արձանագրված բացասական միտումներից պետք է առանձնացնել խմբակային հանցագործությունների մոտ կրկնակի աճը (2008 թ.՝ 739, 2009 թ.՝ 1464), ընդ որում դրանցից 522-ը կրել են կազմակերպված բնույթ: Հատկապես անհանգստացնում է այն փաստը, որ կազմակերպված հանցավոր խմբերի կողմից կատարված հանցագործությունների 40,0%-ը (209-ը) կատարել են օտարերկրյա քաղաքացիներ: Ընդհանուր առմամբ, օտարերկրյա քաղաքացիների կողմից Հայաստանում կատարված հանցագործությունների թիվն աճել է 5,7 անգամ (2008 թ.՝ 79, 2009 թ.՝ 452): Այս ամենն, ինքնին, վկայում է այն մասին, որ մեր երկիրն արդեն իսկ դարձել է միջազգային հանցավոր խմբավորումների հետաքրքրության առարկա: Այդ են վկայում վերջին ժամանակներում Հայաստանում վնասագերծված արտասահմանյան հանցավոր խմբերը: Միջազգային հանցավորության նման «էքսպանսիային» դիմակայելու համար անհրաժեշտ է միջազգային չափանիշներին հասցնել նաև ոստիկանության նյութատեխնիկական հագեցվածությունը, ինչպես նաև ծառայողների պրոֆեսիոնալ պատրաստականության մակարդակը: Այս նպատակով ոստիկանության կողմից արդեն իսկ մշակվել է ՀՀ ոստիկանության կրթական համակարգի բարեփոխումների հայեցակարգը, որն էլ ընդգրկվել է ոստիկանության գործունեության ոլորտի բարեփոխումների ծրագրի նախագծում:

**2. Պատժի անխուսափելիության սկզբունքի հնարավորինս լիարժեք իրագործմանն** անդրադառնալիս արձանագրենք, որ հանցագործությունների ընդհանուր թվաքանակի աճի, բնականաբար, նաև աշխատանքային ծանրաբեռնվածության զգալի ավելացման պարագայում գրեթե բոլոր հիմնական ուղղություններով 2009 թ. արձանագրվել է բացահայտման ցուցանիշների նկատելի բարելավում: Այսպես, վարույթում գտնվող քրեական գործերով ընդհանուր հանցագործությունների բացահայտման արդյունավետությունն աճել է 10,5%-ով (70,0%-ից 80,5%), քրեական հետախուզության գծով՝ 6,1%-ով (69,1%-ից 75,2%), ծանր հանցագործություններով՝ 4,4%-ով (64,9%-ից 69,3%) և առանձնապես ծանր հանցագործություններով՝ 10,8%-ով (57,6%-ից 68,4%):

Ըստ հիմնական հանցատեսակների, 2008 թ. համեմատությամբ բացահայտման աշխատանքների արդյունավետությունը բարելավվել է մի շարք հիմնական հանցատեսակներով՝ սպանություններով (55,4%-ից 63,9%), սպանության փորձերով (48,3%-ից 76,9%), դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու (74,6%-ից 93,4%), այդ թվում՝ ծանր (70,8%-ից 78,3%), ճանապարհային երթևեկության կանոնների խախտման (65,7%-ից 88,0%), այդ թվում՝ մահվան ելքով (81,8%-ից 87,7%), խուլիգանության (92,8%-ից 95,1%), այդ թվում՝ կատարված զենքի գործադրմամբ (73,2%-ից 88,9%), պետական գույքի գողության (70,3%-ից 74,5%), անձնական գույքի ավազակության (52,5%-ից 54,9%), գողության (54,8%-ից 61,3%) և տրանսպորտային միջոց փախցնելու (57,4%-ից 65,5%) դեպքերով:

Միևնույն ժամանակ, բացահայտման աշխատանքների արդյունավետությունը որոշակիորեն նվազել է թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների (87,8%-ից 86,5%), պետական գույքի խարդախության (100%-ից 97,1%), անձնական գույքի կողոպուտի (61,8%-ից 60,9%) և բնակարանային գողության (53,6%-ից 53,1%) դեպքերով:

Պետք է արձանագրել, որ հաշվետու տարում 49,5%-ով աճել է հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզված չլինելու պատճառաբանությամբ նախկին տարիներին կասեցված քրեական գործերով բացահայտված հանցագործությունների թիվը (2008 թ.՝ 101, 2009 թ.՝ 151):

Պատժի անխուսափելիության սկզբունքի ապահովման մյուս կարևորագույն բնագավառը փախուստի մեջ գտնվող հանցագործների հետախուզման աշխատանքներն են: 2009 թ. ընթացքում ոստիկանության մարմինների կողմից հետախուզված հանցագործներից հայտնաբերվել են 1840-ը կամ 13,3%-ը (2008 թ.՝ 1706-ը կամ 12,3%-ը): Բացի այդ, հանրապետության ոստիկանության մարմինների կողմից ձերբակալվել են այլ պետությունների կողմից հետախուզվող ևս 172 հանցագործներ: Միևնույն ժամանակ, ԱՊՀ և այլ պետություններում ձերբակալվել և Հայաստան են տեղափոխվել 57-ը:

Հայտնաբերված անձանցից 31-ը հետախուզվել են սպանության, 30-ը՝ ավազակության, 17-ը՝ կողոպուտի, 100-ը՝ գողության, 114-ը՝ խարդախության, 51-ը՝ խուլիգանության, 36-ը՝ դիտավորությանը առողջությանը ծանր վնաս պատճառելու համար և այլն:

Նախաքննության ապարատը, որպես քրեական պատասխանատվության անխուսափելիության դատավարական սկզբունքի հիմնական պատվարը, հանցագործությունների թվաքանակի աննախադեպ աճի պարագայում, բնականաբար, 2009 թ. նույնպես գործել է զգալի ծանրաբեռնվածությամբ: Այս ամենի հետ մեկտեղ, վերջին երեք տարիների ընթացքում ոստիկանության քննչական ապարատը գրեթե ամբողջությամբ սերնդափոխվեց և համալրվեց երիտասարդ ու անփորձ քննիչներով: Նման պարագայում հաջողվեց հիմնականում պահպանել քննությունը բնութագրող առանցքային որակական ցուցանիշները, տանել հետևողական աշխատանք նախաքննության ընթացքում մարդու իրավունքների պահպանման ու օրինականության ամրապնդման ուղղությամբ: Դատավարական հարկադրանքի միջոցների՝ հատկապես ձերբակալման և կալանավորման հարցում հաշվետու ժամանակահատվածում խախտումներ չեն արձանագրվել:

**3. Քողարկված բնույթ կրող հանցագործությունների հայտնաբերմանն ու բացահայտմանն** անդրադառնալիս, նախևառաջ, պետք է արձանագրել, որ զգալի աշխատանք է տարվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հակազդման ուղղությամբ: 2009թ. հայտնաբերվել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության 1229 դեպքեր, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել են մոտ 2 անգամ (2008 թ.՝ 656): Դրան զուգընթաց, աճել են նաև ցուցանիշները թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետությունը բնութագրող այնպիսի առանցքային ուղղությամբ, ինչպիսին է թմրամիջոցների իրացումը: ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի հատկանիշներով հաշվետու ժամանակահատվածում, նախորդ տարվա համեմատությամբ, հայտնաբերվել են մոտ 2 անգամ ավելի շատ դեպքեր (2008 թ.՝ 284, 2009 թ.՝ 539):

Այս ամենով հանդերձ, 2009թ. ընթացքում նկատելիորեն աճել են առգրավված թմրամիջոցների ծավալները: ՀՀ ոստիկանության ծառայությունների և տարածքային մարմինների կողմից 2009 թ. ընթացքում ապօրինի շրջանառությունից հանվել են ընդհանուր առմամբ 7 կգ 584 գրամ «ափիոն», 1 կգ 400 գրամ «մարիխուանա» և այլ տեսակի թմրամիջոցներ:

Գտնում ենք, որ ՀՀ նախագահի 25.09.2009 թ. թիվ ՆԿ-162-Ն կարգադրությամբ հաստատված «2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագիրը» ավելի կխթանի ոլորտում իրականացվող աշխատանքները, նոր հիմքերի վրա կդնի շահագրգիռ գերատեսչությունների գործունեության համակարգման խնդիրները:

2009 թ. հետևողականորեն շարունակվել է պայքարը մի այնպիսի երևույթի դեմ, ինչպիսին է մարդկանց ապօրինի փոխադրումը (թրաֆիքինգ): Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես սեռական շահագործման նպատակով արտերկիր են տեղափոխվում տասնյակ հայ կանայք: 2009 թ. ընթացքում հանրապետությունում բացահայտվել է կանանց պոռնկության ներգրավելու և շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման 11 դեպք (2008 թ.՝ 15), հայտնաբերվել են թրաֆիքինգի 60 նոր զոհեր (նախորդ տարվա 34-ի դիմաց), որոնցից 27-ը պոռնկության շահագործման նպատակով ՀՀ-ից փոխադրվել են Թուրքիա և ԱՄԷ:

ՀՀ ոստիկանությունը կատարել է ՀՀ կառավարության 06.12.2007 թ. թիվ 1598-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում 2007-2009 թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) դեմ պայքարի ազգային ծրագրով և ծրագրի իրականացման ժամանակացույցով» նախատեսված միջոցառումները, ակտիվորեն մասնակցել ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի նիստերին:

Հաշվետու տարում ՀՀ ոստիկանության օպերատիվ ծառայությունները և տարածքային մարմինները, համագործակցելով հանրապետության մյուս իրավապահ մարմինների հետ, հայտնաբերել են տնտեսական գործունեության դեմ ուղղված 696 հանցագործության դեպք (2008 թ.՝ 456), որից 64-ը հայտնաբերվել է ԿՀԴՊ գլխավոր վարչության կողմից (2008 թ.՝ 33):

Իրագործելով ՀՀ նախագահի հանձնարարականները, ՀՀ իրավապահ մարմինների կողմից տարվել է զգալի աշխատանք՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում: Արդյունքում՝ 2009 թ. ընթացքում հանրապետության իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվել են կոռուպցիոն բնույթի 550 հանցագործության դեպք, ինչը 40,3%-ով ավելի է, քան 2008 թ. ցուցանիշը՝ 392, ընդ որում՝ նշված հանցագործություններից 418-ը կամ 76,0%-ը ի հայտ է բերվել ոստիկանության մարմինների կողմից: Կոռուպցիոն բնույթի հանցագործություններից 56-ը կաշառակերության դեպքեր են, որոնցից 49-ը հայտնաբերվել է ոստիկանության ջանքերով: Բացի այդ, հանրապետությունում 2009 թ. հայտնաբերվել են նաև առևտրային կաշառքի 10 դեպք, որից 7-ը՝ ԿՀԴՊ ԳՎ կողմից:

Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու առումով ՀՀ ոստիկանությունը՝ ի թիվս այլ պետական կառավարման մարմինների, հետևողականորեն պետք է իրագործի ՀՀ կառավարության 08.10.2009 թ. թիվ 1272-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագիրը»: Այդ նպատակով ՀՀ ոստիկանության պետի հրամանով ՀՀ ոստիկանության իրավասությանը վերաբերող ծրագրային միջոցառումները բաշխվել են պատասխանատու ստորաբաժանումների միջև, սահմանվել է դրանց կատարման նկատմամբ հսկողություն:

**4. Բնակչության մոտ անձնական անվտանգության ապահովվածության զգացման ամրապնդման** գերխնդիրը լուծելու համար ՀՀ ոստիկանությունը ձեռնարկել է անհրաժեշտ միջոցներ հանցագործությունների նախականիսման, հասարակական կարգի ու անվտանգության ապահովման ուղղությամբ:

Լիովին գիտակցելով հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների նախականիսման խնդրում ոստիկանության ստորաբաժանումների կողմից զենքի և ռազմամթերքի առգրավման կամ կամավոր հանձնման ուղղությամբ տարվող աշխատանքների որոշիչ դերը, ՀՀ ոստիկանության ղեկավարությունը դրանց իրականացման ընթացքը վերցրել է անմիջական հսկողության տակ: Արդյունքում՝ 2009 թ. ընթացքում նշված ոլորտում տարվող աշխատանքներն իրենց արդյունավետությամբ գերազանցել են 2008 թ. արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է զենքի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության 415 դեպք, ինչը 82,8%-ով ավելի է, քան նախորդ տարում (2008 թ.՝ 227): Հանրապետության ոստիկանության մարմինների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ 2009 թ. ընթացքում առգրավվել է 436 միավոր հրազեն (2008 թ.՝ 248), 1215 միավոր պայթուցիկ սարք (2008 թ.՝ 205), 27702 փամփուշտ (2008թ.՝ 15014), իսկ բնակչության շրջանում տարված բացատրական աշխատանքի շնորհիվ կամավոր հանձնվել է 797 միավոր հրազեն (2008 թ.՝ 481), 2443 միավոր պայթուցիկ սարք (2008 թ.՝ 3382) և 202885 փամփուշտ (2008 թ.՝ 144013):

Անդրադառնալով հասարակական կարգի պահպանման աշխատանքներին, արձանագրենք, որ 2009 թ. ընթացքում ՀՀ ոստիկանության զորքերը, արտաքին ծառայության ստորաբաժանումները և, ընդհանրապես, համակարգի ողջ անձնակազմը կատարել են իրենց առջև դրված խնդիրները, ձեռնարկել են միջոցներ՝ օպերատիվ իրավիճակի կայունությունն ապահովելու, հանրապետությունում կարգուկանոնը պահպանելու ուղղությամբ:

Կարևորելով հանցագործությունների նախականիսման աշխատանքները, ՀՀ ոստիկանության և այլ շահագրգիռ պետական մարմինների կողմից հետևողականորեն իրականացվել է ՀՀ կառավարության 27.03.2008 թ. թիվ 1039-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը»:

Անդրադառնալով անձնագրային և վիզաների վարչության և ենթակա տարածքային անձնագրային ծառայությունների գործունեությանը, ապա պետք է նշել, որ շարունակվել է համակարգի բարեփոխումներին ուղղված խնդիրների իրականացումը՝ հիմնական շեշտը դնելով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման վրա:

Կատարված աշխատանքների հետ մեկտեղ՝ ԱՎ վարչությունը, իրավասու մյուս մարմինների

հետ մեկտեղ, զգալի անելիքներ ունի ՀՀ կառավարության 16.06.2009 թ. թիվ 501-Ա որոշմամբ հաստատված «Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման միջոցառումների ժամանակացույցով» նախատեսված աշխատանքները լիարժեք ավարտին հասցնելու գործում: Ի դեպ, կենսաչափական տվյալներով ինքնությունը հաստատող փաստաթղթերի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 2001 թվականի 1373 բանաձևի ընդունմամբ, համաձայն որի՝ ահաբեկչության դեմ միջազգային պայքարի շրջանակներում պետությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ միջոցներ՝ անձը հաստատող փաստաթղթերի և արտասահմանյան անձնագրերի պատրաստման ներպետական մեխանիզմների նկատմամբ հսկողությունն ու վերահսկողությունն ուժեղացնելու, անձը հաստատող փաստաթղթերի կեղծման հնարավորությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Զգալի աշխատանքներ են կատարվել նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ. հաշվետու տարում ավարտվել է նշված ոլորտի բարեփոխումների 1-ին փուլը, որի ընթացքում համապատասխան փոփոխության է ենթարկվել իրավական դաշտը, քայլեր են ձեռնարկվել կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ: Իրականացված աշխատանքների շնորհիվ, չնայած երթևեկության ինտենսիվության շարունակական աճին, 2009 թ.՝ վերջին 7 տարիների ընթացքում առաջին անգամ նվազել է ինչպես ճանապարհային պատահարների թիվը (2009 թ.՝ 2002, 2008 թ.՝ 2202), այնպես էլ դրա հետևանքով զոհված (2009 թ.՝ 325, 2008 թ.՝ 407) և մարմնական վնասվածք ստացած անձանց թիվը (2009 թ.՝ 2753, 2008 թ.՝ 3125):

Արձանագրված դրական միտումները պահպանելու և զարգացնելու առումով կարևորվում է ՀՀ կառավարության 13.08.2009 թ. թիվ 995-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ և Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարությունով և հինգ տարվա գործողությունների ծրագրով» նախատեսված միջոցառումների անշեղ իրագործումը:

Ի դեպ, անձնագրերի և վիզաների տրամադրման, ինչպես նաև ճանապարհային ոստիկանության գործունեության ոլորտի բարեփոխումները դրական արձագանք են գտել հանրության շրջանում, ինչի մասին են վկայում նաև ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակի եւ ՀՀ Հանրային խորհրդի նախաձեռնությամբ անցկացված հասարակական կարծիքի տարբեր ուսումնասիրությունների արդյունքները:

**5. Բնակչության շրջանում ոստիկանության նկատմամբ վստահության բարձրացման առումով ՀՀ ոստիկանությունը խիստ կարևորում է նաև յուրաքանչյուր ծառայողի կողմից **օրինականության պահպանման խնդիրը**, ինչին հասնելու համար պետք է հիմնովին վերակառուցել ՀՀ ոստիկանության գործելաոճը, ձեռնարկել միջոցներ ոստիկանության ծառայողների շրջանում քաղաքացիների հետ բարեկիրթ վերաբերվելու կուլտուրա սերմանելու, գործունեության ընթացքում օրինականության անշեղ պահպանման ուղղությամբ:**

Արձանագրենք, որ 2009 թ. ընթացքում ոստիկանության ծառայողին ոչ վայել արարք կատարելու համար 84 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Ընդհանուր առմամբ, կարգապահական տույժի են ենթարկվել 939 ծառայողներ, որոնցից 44-ը ազատվել են ոստիկանությունից, պաշտոնն իջեցվել է 12-ի, կոչումն իջեցվել է 8-ի, զգուշացվել են պաշտոնին ոչ լրիվ համապատասխանելու մասին 40 ծառայողներ և այլն:

2009 թ. ընթացքում ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից թույլ տրված տարբեր օրինախախտումների փաստերով հարուցվել է 45 քրեական գործ, որից 22-ը (26 անձով) ուղարկվել է դատարան, 8-ը կարճվել է, այդ թվում 4-ը (5 անձով)՝ ոչ արդարացնող հիմքերով, իսկ 15 քրեական գործ գտնվում է նախաքննության փուլում:

ՀՀ ոստիկանությունը սկզբունքային պայքար է տանում հանցագործությունների դեպքերը չգրանցելու եւ ընթացք չտալու արատավոր պրակտիկայի դեմ: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայությունների և մարզային վարչությունների կողմից կատարված ծառայողական քննություններով ի հայտ է բերվել նման 32 դեպք (2008 թ.՝ 10), որոնցով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 43 ծառայողներ:

Ոստիկանության ղեկավարությունը նման արատավոր երևույթի դեմ տանելու է սկզբունքային

պայքար, զուգահեռաբար ձեռնարկելով միջոցներ՝ տարածքային մարմինների գործունեության գնահատման ժամանակակից չափանիշներ մշակելու և ներդնելու ուղղությամբ, ինչը կնպաստի քաղաքացիների սահմանադրական իրավունքների պահպանմանը և ծառայողների նախաձեռնողականության խթանմանը:

Ոստիկանության նկատմամբ **վստահության** մթնոլորտ ձևավորելու առումով հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ նաև քաղաքացիական հասարակության բոլոր ինստիտուտների հետ բաց երկխոսություն ծավալելու, ՀՀ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի գործունեությունն առավել ազդեցիկ և արդյունավետ դարձնելու, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների մատչելիությունը, օպերատիվությունն ու որակն ապահովելու ուղղությամբ: Բավական է միայն նշել, որ ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի, ճանապարհային ոստիկանության, անձնագրերի և վիզաների վարչության «Թեժ գծերով» ստացվել և ընթացք է տրվել քաղաքացիների շուրջ 5000 դիմումների:

Հաշվետու տարում միջոցներ են ձեռնարկվել նաև ոստիկանության գործունեությունը առավել թափանցիկ դարձնելու, դրանում հանրությանը ներգրավելու ուղղությամբ: ՀՀ ոստիկանության ղեկավարությունը, առանցքային ստորաբաժանումների պետերը 18 ասուլիսների, բրիֆինգների միջոցով 2009 թ. ընթացքում պարբերաբար հանրությանն են ներկայացրել կատարված աշխատանքները և ոլորտի հիմնախնդիրները:

Միջազգային չափանիշներին համապատասխանող ոստիկանություն ունենալու հասարակության արդարացի պահանջը հաշվի առնելով, Եվրոպական հարևանության քաղաքականության Եվրամիություն-Հայաստան գործողությունների ծրագրի իրականացման շրջանակներում ՀՀ ոստիկանության կողմից նախապատրաստվել է ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագրի նախագիծ, որն արդեն իսկ սահմանված կարգով դրվել է շրջանառության մեջ: Ծրագրով նախատեսվում է իրականացնել բարեփոխումներ ոստիկանության գործունեության 11 հիմնական ուղղություններով, այդ թվում՝ քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության, քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների ելքի և մուտքի հետ կապված գործընթացների հստակեցման, ոստիկանության կողմից իրականացվող միզրացիոն վարչարարության կատարելագործման, նոր անձնագրային համակարգի ներդրման, ճանապարհային երթևեկության անվտանգության, կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման, համակարգչային հանցագործությունների, թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, ոստիկանության համակարգի կառուցվածքային, կազմակերպական, կրթական և այլ ոլորտներում: Ընդհանուր առմամբ, ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագրի նախագիծը նախատեսում է 65 ակնկալվող արդյունք, որոնց հասնելու համար ծրագրով կանխանշվել են շուրջ 200 միջոցառումներ:

**Ամփոփելով 2009թ. ընթացքում կատարված աշխատանքները, ՀՀ ոստիկանությունը** հավաստիացնում է, որ ընթացիկ տարում շարունակելու է հետեւողական աշխատանքը հանցավորության դեմ պայքարն առավել արդյունավետ կազմակերպելու, հանրապետությունում կայուն հասարակական կարգ ու կանոն պահպանելու, անձնակազմի շրջանում կատարողական եւ ծառայողական կարգապահությունն ամրապնդելու ուղղությամբ:

**ՀՀ ոստիկանություն**